ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. նոյեմբերի 6-ից 15-ը Շվեդիայի Թագավորություն և Էստոնիայի Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը**
   Վահան Պոտոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության կոշտ կենցաղային թափոնների կառավարման բաժնի գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Շվեդիայի Թագավորություն և Էստոնիայի Հանրապետություն, նոյեմբերի 6-ից 15-ը:

4. **Հրավիրող կողմը**
   Հրավերը ստացվել է «Gastrike Atervinnare» կազմակերպության կողմից, որը Շվեդիայում իրականացնում է թափոնների հավաքման, փոխադրման և պահման ծառայություններ:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**
   Մասնակցել «Կոշտ կենցաղային թափոնների կառավարման թվայնացում և հանրային իրազեկվածության բարձրացում» մեկամյա ծրագրի շրջանակներում ուսուցողական այցին:

6. **Քննարկված թեմաները**
   «Gastrike Atervinnare» և Էստոնական «Ida-Virumaa Omavalitsuste Liit» կազմակերպությունների հետ քննարկվել են բնակավայրերում աղբահանության աշխատանքների կազմակերպման փորձը, մասնավորապես՝ բազմաբնակարան շենքերից և առանձնատներից աղբի տեսակավորված հավաքման, ID կոդավորված և միկրոսխեմաներով հագեցած աղբամանների հիման վրա աղբահանության թվայնացված երթուղիների կառավարման առանձնահատկությունները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**
Հանդիպել եմ «Gastrike Atervinnare» կազմակերպության միջազգային հարաբերությունների, սպառողների հետ հաղորդակցության, GIS ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ծանոթացել յուրաքանչյուր ստորաբաժանման խնդիրներին և աշխատանքներին: Մասնակցել եմ տեղամասային այցերի թափոնների վերամշակման կենտրոնում, աղբատարների, հատուկ նշանակության մեքենասարքավորումների և կոնտեյների վերանորոգման կենտրոնում, վտանգավոր թափոնների ընդունման և պահման կենտրոնում, ինչպես նաև Յեվլե քաղաքի հարևանությամբ գործող սանիտարական աղբավայրում և փոխաբեռնման կայանում:
Նմանատիպ հանդիպումներ ունցել եմ Էստոնիայում «Ida-Virumaa Omavalitsuste Liit» կազմակերպության գրասենյակում (ք. Յոհվի), մասնակցել եմ տեղամասային այցերի Էռռա բնակավայրում գործող վերամշակման կենտրոնում, Ույկալայի սանիտարական աղբավայրում, Էստոնիայի պետական անտառային ազգային պարկում:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր**
Ուսուցողական այցի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել 2024 թվականի ապրիլ ամսին ապահովել գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների ծրագրով նախատեսված այցը Հայաստանի Հանրապետություն:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքներ**
Առաջարկվել է ծրագրի շարունակությունն ապահովելու և 8-րդ կետում նշված պայմանավորվածությունն իրագործելու համար հետևողական աշխատանքներ տանել:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

17.11.2023թ.